

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**<< ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ >> ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱՎ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՉՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐԵԳՆԱԶ ԴԱՎԹՅԱՆ**

Չետագրտական աշխատանք

Թեմա-<<Երկխոսությանը ներկայացվող պահանջները>>

1. Ներածություն

2. Բանավոր խոսքի ուսուցում

3. Երկխոսությունը որպես բանավոր խոսքի ուսուցման միջոց

4. Երկխոսության ուսուցման ներկայացվող պահանջները, դժվարությունները և հաղթահարման ուղիները

5. Եզրակացություն

Գրականություն

Ներածություն

Որևէ գործունեություն ծավալելու պայմանը այն իրականացնելու համար անհրաժեշտ կարողություններն ու հմտություններն են:Քանի որ անգլերեն լեզվի ուսուցման հիմնական նպատակներից մեկը խոսքային գործունեություն ծավալելն է,ապա աշակերտները պետք է ձևավորեն ու զարգացնեն խոսքային կարողություններ և հմտություններ:

Մարդկային յուրաքանչյուր գործունեություն ունի իր շարժառիթը և վերջնական նպատակը,որին հասնելու համար մարդը կատարում է մի շարք գործողություններ,որոնք նույնպես ունեն իրենց միջանկյալ խթանն ու նպատակը:Գործողության նպակակի իրականացման հետ այն ավարտվում է ,այս կամ այն չափով նպաստելով վերջնական նպատակի իրականացմանը:1

Յուրաքանչյուր գործողության կատարումը պահանջում է որոշակի կարողություններ,որոնց կատարյալ կամ թերի ձևավորվածությունը իր դրական կամ բացասական ազդեցությունն է թողնում վերջնական նպատակի իրականացման վրա: Չմուտ է այն մարդը,որն ըստ կարողությունների մի շարք գործողություններ կատարելով,ճիշտ,արագ ու կատարյալ,իրականացնում է վերջնական նպատակը:

Խոսքային գործունեությունը նույնպես պահանջում է որոշակի կարողություններ և հմտություններ:Մեկ նախադասություն կազմելու համար անգամ անհրաժեշտ է կատարել մի շարք գործողություններ,որոնցից յուրաքանչյուրն ունի իր կարևոր դերը նախադասության ճիշտ ձևավորելու գործում:

Օրինակ` She asked if the boys were present at the meeting.

Tom recites the poem.

Նախադասությունը ճիշտ կառուցելու համար անհրաժեշտ են որոշակի կարողություններ,որոնք հնարավորություն կտան ճիշտ և արագ կատարելու համապատասխան գործողություններ: Կարողությունները պետք է հնարավորություն տան մարդուն ճիշտ և արագ կատարել արտասանական,բառային և քերականական բազմաթիվ գործողություններ հանուն վերջնական նպատակի իրականացման`այսինքն խոսքային գործունեության ծավալման:Որպեսզի մարդըհմուտ կերպով խոսքային գործունեություն ծավալի, տարբեր մակարդակի կարողությունները պետք է ոչ միայն ձևավորվեն,այլ նաև հասցվեն ավտոմատիզմի աստիճանի,այսինքն, դրանց կատարումը պետք է լինի ենթագիտակցական, արագ ու ճիշտ, այն համարյա ուշադրություն չպետք է պահանջի խոսողից,այլապես նրանք կխանգարեն մարդուն ճիշտ,արագ ,սահուն արտահայտել կամ ընկալել:

1.А.А Леонтьев--<<Некоторые проблемы обучения русскому языку какиностранному>>Из-во МГУ 1970,стр 21-22

Լեզվական օրինաչափությունների համաձայն բառերը միմյանց կապակցելու կարողությունը բավարար չի խոսքային գործունեություն ծավալելու համար; Այդ պայմանը անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Մարդը պետք է ունակ լինի ,ըստ իրադրության իր գիտակցության մեջ ծնված միտքը բանավոր կամ գրավոր արտահայտելու, ինչպես նաև գրավոր կամ բանավոր արտահայտած միտքը հասկանալու համար , ճիշտ և արագ զուգակցել անհրաժեշտ կարողություններ:

Ըստ իրադրության ծնված մտքի արտահայտման և ընկալման կարողությունների ճիշտ և արագ զուգակցումը խոսում է այն մասին, որ տվյալ անձնավորությունն ունի խոսքային հմտություններ: Լեզուների ուսուցման մեջ շատ կարևոր են խոսքային կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը, որպես խոսքային գործունեություն ծավալելու անհրաչեշտ պայման: Լեզուների դպրոցական ուսուցման հիմնական նպատակներից մեկը հաղորդակցվելն է, ուստի պետք է աշխատել, որպեսզի դպրոցական ծրագրի պահանջների սահմաններում, մի կողմից ձևավորվեն ու ավտոմատիզմի աստիճանի հասցվեն լեզվական գործողություններ կատարելու կարողություններ, մյուս կողմից նրանց հիման վրա ձևավորվեն ու զարգանան խոսքային հմտություններ:

Օտար լեզուների դպրոցական ուսուցման հաղորդակցման նպատակը պահանջում է , որ դպրոցի շրջանավարտը կարողանա խոսքային գործունեություն ծավալել ծրագրում նըշված թեմաների սահմաններում; Իսկ նման գործունեություն ծավալելու համար նա պետք է ունենա համապատասխան խոսքային կարողություններ և հմտություններ , որոնց ձևավորման միջոցը վարժությունն է: Խոսքային հմտությունը ենթադրում է բազմապիսի լեզվական և խոսքային կարողություններ, որոնք պետք է հասցվեն ավտոմատիզմի աստիճանի. խոսողը, առանց ուշադրության կենտրոնում պահելու լեզվական կողմը, ունակ լինի այդ կարողություններն օգտագործելու, անհրաժեշտ միտքը հաղորդելու կամ ընդունելու համար: Լեզվին տիրապետելու համար աշակերտը պետք է կարողանա բազմաթիվ ու բազմապիսի գործողություններ կատարել լեզվական նյութի հետ, ինչպես a book, two books, many books; a man, two men, water; much water; he comes, they come, does he come?; do they come? he went; did they go?

Աշակերտը պետք է կարողանա, առանց ուշադրության կենտրոնում պահելու լեզվական ձևը ճիշտ և արագ, ավտոմատ կերպով ծառայեցնել դրանք մտքի բանավոր կամ գրավոր արտահայտմանը, ընկալմանն ու իմաստավորմանը: Դրանց նպաստող վարժությունների նպատակը լեզվին տիրապետելն է, լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործելը:

Լեզվական վարժությունները, ունենալով ձևական փոփոխությունների հետ կապված դժվարությունների հաղթահարման խնդիր, պետք է ծառայեն խոսք կառուցելու նպատակին, դրանք պետք է ունենան հաղորդակցման ուղղվածություն:

Դպրոցական բառապաշարի և քերականության ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ ուսուցանվող բառերն ու քերականական երևույթները հաջորդաբար օգտագործվեն խոսքային գործունեության մեջ: Այդպիսի հմտություններ և կարողություններ ձևավորելու համար անգնհատելի է երխոսությունների և մենախոսությունների դերը: Ավելի մանրամասն կանրադառնալով հատկապես երկխոսություններին, որտես խոսքային հմտությունների ձևավորման կարևոր միջոց:

Բանավոր խոսքի ուսուցում

Լեզուն մի կուռ,ամբողջական և անընդհատ զարգացող համակարգ է,իսկ բանավոր խոսքը ` այդ համակարգի օրինաչափությունների հիման վրա ծավալվող գործունեություն:Լեզվական համակարգն ունի իր միավորները.հնչյուն, ձևույթ, բառ, բառակապակցություն,նախադասություն և այլն:Իսկ նախադասությունը նաև խոսքի նվազագույն միավոր է:Նախադասության նման հատկանիշը` մի կողմից լեզվի,մյուս կողմից` խոսքի միավոր լինելը օտար լեզուների ուսուցման առջև խիստ կարևոր խնդիր է դնում:

Բանավոր խոսքի ուսուցման համար մեթոդական գրականության մեջ ընդգծվում են հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

1.Շարժառիթ

2.Իրադրական պայմանավորվածություն

3.Ուղղվածություն¹

1.Մարդը խոսում է որոշակի պահանջով,ներքին անհրաժեշտությունից դրդված:Շարժառիթը մարդուն մղում է արտահայտվելու, ստեղծում է ինչ-որ բան ասելու անհրաժեշտություն,մտադրություն , ցանկություն,և մարդու գիտակցության մեջ ծնվում է միտքը,որոշակի է դառնում,թե մարդը ի՞նչ է ուզում ասել և ինչու²:Շարժառիթը մարդու արտահայտվելու խթանն է,առանց որի մարդը որևէ գործունեություն չի ծավալում:

2. Մարդու խոսքն իրադրական է:Մարդու գիտակցության մեջ միտքը ծնվում է կապված արտալեզվական մի շարք հանգամանքների ամբողջության հետ և մարդն արտահայտվում է ըստ իրադրության ծնված մտքի:Մարդու խոսքն անբակտեի կերպով կապված է իրադրության հետ, այն պարզ է ու հասկանալի տվյալ իրադրության մեջ: Խոսքային արդյունավետ գործունեություն ծավալելու համար,ըստ տվյալ լեզվի օրինաչափությունների ճիշտ կազմված նախադասությունն անհրաժեշտ պայման է,սակայն ոչ բավարար:Որպեսզի յուրաքանչյուր նախադասություն որոշակի ինֆորմացիա հաղորդի,ունենա հաղորդակցման արժեք,պետք է վերաբերվի որոշակի իրադրության:

Նույնիսկ իրադրության բաղադրիչի փոփոխության դեպքում նույն նախադասությունն կարող է հակառակ միտք արտահայտել:Օրինակ` <<Ձանգը հնչեց>>նախադասությունը օգտագործենք տարբեր իրադրություններում:Մի իրադրությունում այն կարող է արտահայտել դասի ավարտ, իսկ մյուսում`դասի սկիզբ:Լեզվական տեսանկյունից նույն նախադասությունը իրադրությունից կախված արտահայտում է հակառակ իմաստ:Յետևվաբար օտար լեզուների ուսուցման ժամանակ բանավոր խոսքի արդյունավետ ունակություններ ձևավորելու համար անհրաժեշտ է ապահովել աշակերտի արտաբերած նախադասությունների իրադրական պայմանավորվածությունը: Դասարանում իրադրական իրավիճակներ կարելի է ստեղծել տարբեր միջոցներով`գննական պարագաներ,դերային իրավիճակներ: Իրադրություններ կարելի է ստեղծել `ելնելով աշակերտների կենսափորձից;Կան երևույթներ,որոնք աշակերտի կյանքում կրկնվում են:Այդ երևույթների շուրջ զրոյցները շատ է օգնում բանավոր խոսքի զարգացմանը:

1Գ. В. Рогова-<<Методика обучения английскому языку>>Л, 1975 стр. 156-157

Օրինակ՝ T: Your hands are dirty. What must you do?

P: I must wash them.

T: Where do you usually wash them?

P: In the bathroom.

T: What do you wash them with?

P: I wash them with water.

T: Do you wash them with hot or cold water?

P: I wash them with hot water. I don't like to wash with cold water.

Իրադրություններ ստեղծելու լավագույն միջոցներից է խաղը: Խիստ արդյունավետ են listen, ask and answer կամ read, ask and answer տիպի վարժությունները, որի արդյունքում զարգանում են երկխոսական ունակություններ:

3. Երբ ըստ իրադրության մարդու գիտակցության մեջ ծնվում է միտքը, որոշակի է դառնում ոչ միայն այն, թե ինչն ինչու է ասելու, այլ թե ու՞մ է ասելու, ու՞մ է ուղղված իր խոսքը: Ուղղվածությունն ազդում է խոսքի վրա: Մարդը նույն ձևով չի խոսում իր ծնողի, հասակակից ընկերոջ, ուսուցչի կամ գործընկերոջ հետ:

Երբ ուսուցման մեջ չի ապահովվում որոշակի ուղղվածություն, աշակերտը չի իմանում ու՞ր կամ ու՞մ նայի. կա՛մ առաստաղին է նայում, կա՛մ հատակին և պատուհանից դուրս:

Որեմն, երբ աշակերտի առջև խոսելու խնդիր է դրվում, անհրաժեշտ է պահովել նրա խոսքի ուղղվածությունը:

Օրինակ՝ Ask your friend... Tell the class...

Explain to your younger brother...

Չադրրդակցման ժամանակ կարևոր նշանակություն ունեն խոսողների տարիքը, խոսակցության թեման, խոսողի միմիկան, ժեստերը և այլն:

Բանավոր խոսքին հատուկ է ձայնարկությունների, ներմուծվող բառերի օգտագործումը, արտահայտության կարճությունն, կրճատ ձևերի օգտագործումը, ձայնի ինտոնացիան:

Այս բոլոր առանջնահատկությունները, անշուշտ, չեն կարող դպրոցական ուսուցման առարկա դառնալ, բայց դրանք պետք է հաշվի առնվեն հատկապես երկխոսության ուսուցման մեջ:

Երկխոսությունը որպես բանավոր խոսքի ուսուցման միջոց

Դպրոցում բանավոր խոսքի ուսուցման հիմնական խնդիրը ծրագրերի պահանջների սահմաններում մտքերը բանավոր արտահայտելու և ուրիշի բանավոր խոսքը լսել-հասկանալու հմտությունների ձևավորումն է: Այդ հմտությունների ձևավորմանն ուղղված աշխատանքն սկսվում է ուսուցման առաջին աստիճանից և շարունակվում ու կատարելագործվում է մինչև բարձր(ավագ) աստիճանի ավարտը: Որպես այդ աշխատանքի հետևանք դպրոցի շրջանավարտը պիտի կարողանա բանավոր հաղորդակցվել դպրոցական թեմաների շուրջ:

Եթե բանավոր խոսքի բաղադրիչների հարաբերությունը ներկայացնենք գծապատկերի ձևով, այն կունենա հետևյալ տեսքը.

Բանավոր խոսք

/ \

1. Մտքերը բանավոր 2. լսել-հասկանալ

Արտահայտել

/ \

ա. մենախոսություն բ. երկխոսություն

Անհրաժեշտ է տարբերակված մտոցում ցուցաբերել մենախոսության, երկխոսության և խոսքը լսելով հասկանալու ուսուցմանը: Նրանցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ դրժվարություններ և առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն և արտացոլվեն հատուկ վարժությունների համակարգում: Երկխոսական հմտությունների զարգացումն ինքնին չի կարող ապահովել մենախոսական հմտությունների զարգացումը և հակառակը: Ուսումնասիրելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, անհրաժեշտ է վեր հանել դպրոցական ուսուցման հետ կապված կարևորագույն խնդիրները և գտնել դրանց լուծման արդյունավետ եղանակները:

Ներկայացնենք երկխոսությունն որպես բանավոր խոսքի ուսուցման միջոց և հնար: Իսկ ի՞նչ է երկխոսությունը և ի՞նչու է կարևոր երկխոսության ուսուցումը:

Երկխոսություն բառը ծագել է հունարեն դիալոգ բառից, որը նշանակում է զրույց, խոսակցություն 2 կամ ավելի անձանց միջև: Երկխոսության յուրաքանչյուր արտահայտություն ուղղված է խոսակցին ի հարցումն կամ ի պատասխան: Գրականության մեջ երկխոսությունը կերպարի բնութագրման միջոցներից է: Երկխոսությունը նաև գրական-փիլիսոփայական ժանր է, փիլիսոփայական որոշ երկեր գրվել են երկխոսական ձևով:

Երկխոսությունը հաղորդակցման ձև է, որի ընթացքում երկու կամ ավելի խոսակիցներ փոխանակում են միմյանց փոխապայմանավորող արտահայտություններ: Ընդ որում այդ արտահայտությունները կապված են և՛ նախորդ, և՛ հաջորդ աստահայտությունների հետ: Երկխոսության մեջ փոխադարձաբար կապված արտահայտությունները կոչվում են

ռեպլիկներ: Ռեպլիկները ունեն ոչ միայն իմաստային, այլ նաև կառուցվածքային փոխադարձ կապ: Կառուցվածքային և իմաստային փոխադարձ կապ ունեցող ռեպլիկները կոչվում են երկխոսական միասնություններ¹:

Ռեպլիկները չպետք է նույնականցնել նախադասության հետ: Այն կարող է ներառել մեկ կամ մի քանի նախադասություններ: Պատասխան ռեպլիկները կարող են կրճատ ձևով արտահայտվել՝ նույնիսկ մինչև մեկ բառ:

Օրինակ՝ ----When did you meet her?

-----Two hours ago.

-----Where do you live?

----- In Vanadzor.

Երկխոսության ուսուցման հիմքում պետք է դնել ոչ թե առանձին ռեպլիկ արտահայտությունը, այլ իմաստային, կառուցվածքային փոխադարձ կապ ունեցող և իրադրական պայմանավորվածություն ունեցող երկխոսական միասնություններ:

1, Н. Ю Шведова <<Очерки по синтаксису русской разговорной речи>> М 1958

Երկխոսության ուսուցման ներկայացվող պահանջները, դժվարությունները եվ հաղթահարման ուղիները

Օտար լեզուների դպրոցական ծրագրերը որոշակի պահանջներ է ներկայացնում երկխոսության ուսուցմանը: Աշակերտների երկխոսական հմտությունները դասարանից դասարան պետք է աճեն, ընդլայնվեն ու աստիճանաբար կատարելագործվեն, որպեսզի աշակերտները կարողանան զրուցել դպրոցական թեմաների շուրջ և ոչ միայն: Չրոպցի ընթացքում աշակերտը պետք է կարողանա ինֆորմացիա հաղորդել և հարցերի միջոցով նաև ստանալ, հաստատել, համաձայնվել, գնահատել, իր վերաբերմունքը ցույց տալ զրոպցի ընթացքում շոշափվող տարբեր հարցերի, երևույթների ու դեպքերի նկատմամբ:

Այս խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կազմակերպել երկխոսական հմտությունների ձևավորմանն ուղղված պլանավորված, համաչափ և նպատակասլաց աշխատանք: Արտասանական, քերականական և բառային կարողությունները, որոնք ստեղծվում են լեզվական նյութի մատուցման և ամրապնդման աստիճանում, պետք է հիմք հանդիսանան այս աշխատանքի համար:

Երկխոսությունն ունի իր յուրահատկությունները, որոնց հիման վրա անհրաժեշտ է կատարել վարժությունների մի այնպիսի ամբողջություն, որն ապահովի աշակերտի երկխոսական հմտությունների ձևավորումը, նրան հնարավորություն տա զրուցել իր սովորած օտար լեզվով: Մեթոդական ուղղեցույցների մեջ նշվում են երկխոսական հետևյալ առանձնահատկությունները¹:

1. Երկխոսությունն հնարավոր չէ պլանավորել այն կախված է խոսակիցներից, որոնց արտահայտած ռեպլիկները կապված են միմյանց հետ: Յուրաքանչյուր նոր արտահայտություն պայմանավորված է իրադրությամբ կամ նախորդ արտահայտությամբ:
2. Երկխոսությունն իրադրական է, այդ պատճառով նրա բովանդակությունը հնարավոր է հասկանալ միայն այդ իրադարձության հիման վրա, որում այն ստեղծվում է: Իրադրությունը կարող է լինել արտալեզվական կամ կոնտեքստային:
3. Երկխոսությունն ունի զգացմունքային երանգավորում: Չրոպցի ընթացքում ի հայտ են գալիս խոսակիցների ապրումները, հույզերը, որոնք էլ պահանջում են յուրահատուկ հնչերանգ, բառային ու քերականական միջոցներ:

Երկխոսության հիմքում ընկած է ռեպլիկների փոխանակումը, որոնք խիստ բազմազան են. ռեպլիկ-հարց, ռեպլիկ- պատասխան, ռեպլիկ- հաստատում, ռեպլիկ-ժխտում, ռեպլիկ-խնդրանք, ռեպլիկ- հրավեր և այլն:

1. А.А Леонтьев--<<Некоторые проблемы обучения русскому языку какиностранному>>Из-во МГУ 1970, стр 8-9

Մեր կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ դպրոցական դասագրքերի վարժությունների համակարգում բավարար չեն երկխոսական հմտությունների զարգացմանն ուղղված վարժությունները: Դրանք հիմնականում հարց ու պատասխան ռեպլիկներից կազմված լինելով, չեն ապահովում անհրաժեշտ հմտությունների ձևավորումը: Երկխոսության մեջ անշուշտ շատ են օգտագործվում հարց- պատասխան ռեպլիկներն, սակայն այն հանգեցնել հարց-պատասխանի՝ նշանակում է խիստ սահմանափակել: Մեթոդական գրականության մեջ միշտ քննադատվել է երկխոսության նման սահմանափակումը:¹

Երկխոսական հմտություններ զարգացնելու համար կիրառվող հարց- պատասխան վարժությունները կատարվում են հիմնականում ուսուցիչ-աշակերտ կապի մեջ: Դիտարկենք մարդկանց միջև տեղի ունեցող կենդանի հաղորդակցումը, կնկատենք, որ հարց-պատասխան երկխոսությունը օգտագործվում է որոշակի տիպի հարցաքննությունների ժամանակ, որի ընթացքում մարդը գտնվելով լարված ու անհանգիստ վիճակում ձգտում է հնարավորին չափ շուտ ազատվել: Երբ մարդը զրույցի ընթացքում գտնվում է պատասխանողի դերում, նա սկսում է խուսափել զրույցից: Ուրեմն, երբ աշակերտը գտնվում է միշտ պատասխանողի դերում, նա այդ պարտականությունը կատարում է տհաճությամբ և ձգտում է ազատվել այդ վիճակից:

Դպրոցական պրակտիկայում կիրառվող հարց- պատասխանի դեպքում, խոսակիցների համար խոսքի բովանդակության նորություն չկա, քանի որ ամենատարածված վարժություններից մեկը ծանոթ տեքստի բովանդակության շուրջ կազմակերպվող հարց- պատասխանն է: Հարց տվողը չի հետապնդում նոր ինֆորմացիայի ձեռքբերման նպատակ, և պատասխանողն էլ չի հաղորդում նրան նոր տեղեկություններ: Կենդանի հաղորդակցման մեջ բնական ու տրամաբանական են այն հարցերը, որոնք հետապնդում են նոր ինֆորմացիա ձեռք բերելու նպատակ: Այս տեսակետից նույնպես նման հարց պատասխանները չեն կարող արդյունավետ լինել երկուսական հմտությունների ձևավորման ու զարգացման համար, որովհետև նրանք չեն բխում ներքին անհրաժեշտությունից: Մեր նպատակը լեզվի ուսուցման պայմանները հնարավորին չափ կենդանի հաղորդակցման պայմաններին մոտեցնելն է, ուրեմն պետք է հաշվի առնել նշված տիպի հարց-պատասխան վարժությունների թերությունները, փոխարինել դրանք ավելի արդյունավետ վարժություններով:

Երկխոսության ուսուցման հիմքում պետք է դնել իմստային, կառուցվածքային փոխադարձ կապ և իրադրական պայմանավորվածություն ունեցող երկխոսական միասնություններ: Միասնությունը սովորաբար բաղկացած է խոսակցության մղող, խթանող և նրան ռեակցիա հանդիսացող ռեպլիկներից: Կենդանի հաղորդակցման մեջ այս ռեպլիկների բնույթը խիստ բազմապիսի է: Ուսումնական նպատակով դրանք պետք է խմբավորել, դասակարգել ու մոդելավորել:

Դպրոցական ուսուցման առարկա պետք է դառնան երկխոսական հետևյալ միասնությունները.

1. Հարց-պատասխան
2. Հաղորդում-հարց
3. Հաղորդում-հաղորդում

4. Հարց-հարց

Ուսուցչի խնդիրն է ձևավորել երկխոսական վերոհիշյալ միասնություններ կազմելու համար անհրաժեշտ ռեպլիկների արտահայտման և դրանց հիման վրա տրամաբանական ավարտվածություն ունեցող երկխոսություններ կազմելու հմտություններ:

Կենդանի զրույցի ընթացքում խոսակիցները հաճախ հայտնում են շնորհակալություն, վրդովմունք, զարմանք, հիացմունք, համաձայնություն և այլն: Այդ պատճառով էլ աշակերտները պետք է յուրացնեն մի շարք պատրաստի ֆրազաներ. ինչպես thank you, you are welcome, sorry, with pleasure, how nice, good luck, I think, as for me, by all means և այլն: Պատրաստի ֆրազաների ըստ իրադրության օգտագործումն անհրաժեշտ են աշակերտներին, դրանք զրույցը դարձնում են ավելի կենդանի:

Երխոսության միասնությունների ուսուցումը պետք է սկսել ամենապարզ հարց պատասխան միասնությունից և հաջորդաբար բարդացնել: Արտաբերվել ռեպլիկների հնչերանգի ճշտությունը չպետք է վրիպի ուսուցչի ուշադրությունից: Աշակերտներին տված հարցերը պետք է ուղղված լինեն անհայտի պարզաբանմանը, կամ հայտնիի շուրջ հավելյալ տեղեկություններ ստանալուն: Նման վարժությունների կատարումը նրանք պետք է հաջորդաբար կարողանան օգտագործել իրենց սովորած լեզվական նյութը տվյալ արհեստական կամ բնական իրադրությունից բխող հաղորդակցման խնդիրը լուծելու համար: Աշակերտին պետք չէ առաջարկել վերացական խնդիրներ, օր` հարցեր տվեք նկարի շուրջ և պատասխանեք: Երկխոսական հմտության ձևավորմանն պատասխանով վարժություններ կատարելիս հաղորդակցման խնդիրը պետք է ընդգծված լինի, պարզ ու հասկանալի լինի աշակերտների համար, նրա լեզվական կարողությունների առումով` իրագործելի:

Հարց-պատասխան միասնության մեջ գլխավորը հանդիսանում է հարցը` առաջին ռեպլիկը: Պատասխան ռեպլիկները կարող են կարճ լինել:

Դպրոցական ուսուցման պրակտիկայում, երբ կատարվում են հարց-պատասխան վարժություններ, մենք աշակերտներից պահանջում ենք հարցի լրիվ պատասխան, որը շատ դեպքերում ճիշտ չէ: Որպեսզի երկխոսությունները բնական հնչեն, երեխաներին պետք է վարժեցնել տալ կարճ պատասխաններ, նույնիսկ կարճ հարցեր:

--What is your next lesson?

-- English, and yours?

----Russian.

Ուսուցիչներից շատերը (ևս և են) պահանջում են տալ երկար հարցեր և պատասխաններ: Օր`

--What is your next lesson?

--Our next lesson is English. What is your next lesson?

--Our next lesson is Russian

Ուսուցման մեջ պետք է օգտագործել բնական երկխոսության նուշը: Շատ ուսուցիչներ առարկում են պնդելով, որ լրիվ պատասխաններն ամրապնդում են աշակերտի ճիշտ նախադասություն կազմելու կարողությունը:

Հարց-պատասխան երկխոսական հմտության ձևավորման համար աշակերտը պետք է կարողանա արտահայտել ռեպլիկ հարց և ռեպլիկ պատասխան: Ռեպլիկ պատասխանը իր իմաստով ու կառուցվածքով կախված է ռեպլիկ հարցից, այն ավելի հեշտ է յուրացնել, այդ պատճառով 3-րդ դասարանում ամենապարզ միասնությունների ուսուցումը սկսվում է ուսուցիչ-աշակերտ և շարունակվում աշակերտ-աշակերտ կապի մեջ:

--What is it?

-- It's a book,

--Are you a school-boy?

--Yes, I am.

__Does he go to school?

--Yes, he does.

Նախքան այսպիսի վարժություններ կատարելը, աշակերտները պետք է կարողանան ճիշտ կառուցել հարցական և ժխտական նախադասություններ: Երբ աշակերտները առաջարկվող հարցերին կարողանում են ճիշտ պատասխանել անհրաժեշտ է նրան

վարժեցնել նոր ինֆորմացիա պահանջող հարցեր տալ: Տրված հաստատական նախադասությունները հարցական դարձնելը հաղորդակցման առումով շատ քիչ կարող է օգտակար լինել աշակերտների: Աշակերտի հարցը պետք է տրամաբանորեն բխի հախորդակցական խնդրից և ուղղված լինի նրա լուծմանը:

4-րդ դասարանում աշակերտները պետք է յուրացնեն 250 բառ և ձևավորեն ընդհանուր, ընտրական և որոշ հատուկ հարցեր կազմելու կարողություն: Այս նյութը նրանք պետք է օգտագործեն երիտասրդության մեջ: Հարցերի կառուցման քերականական կարողությունները ձևավորելուց հետո, անհրաժեշտ է այն ներառել երիտասրդության վարժությունների մեջ: Օր.՝ նշվում են զանազան առարկաներ, իսկ աշակերտները ընտրական հարցերի միջոցով պարզում են նրանց տարբեր հատկանիշներ: Նման վարժությունները սկսում են ուսուցիչ-աշակերտ և շարունակվում են աշակերտ-աշակերտ կապի մեջ:

T: I think you have an interesting book.

Ann: Yes, I have.

P₁: Is it English or Russian?

Ann: It's Armenian.

P₂: Is it in your bag or on the table?

Ann: It is in my bag.

Or

T: Aram, I think you have a younger brother.

Aram: Yes, I have.

P₁: Does he go to school in the morning or in the afternoon?

Aram: He goes to school in the afternoon.

P₂ Does he learn English or French at school?

Aram: He learns German.

Տարրական դասարաններից սկսած, ոչ միայն պետք է սովորեցնել հարց-պատասխան, այլ նաև հաղորդում-հարց երկխոսական միասնության ամենապարզ ձևերը: Օր.՝ պարզ պատկանելիություն

T: There is a textbook on my table?

P₁: Whose textbook is it?

P₂: It's mine.

Or

T: There are two pencils on the desk.

P₁: Whose pencils are they?

P₂: They are Armen's pencils.

Պարզել, ինչ կարող էանել և չի կարող անել աշակերտը

T: Aram is a pupil?

P₁: Can he read and write Russian?

P₂: Yes, he can.

P₃: Can he play chess?

P₂: No, he can't.

Պարզել գործողության տեղը, ժամանակը

T: They have breakfast.

P₁: When do they have breakfast?

P₂: At 8 o'clock.

P₃: Where do they have breakfast?

P₂: In the kitchen.

Այս տիպի վարժությունները երխոսական միասնություններ ստեղծելու կարողություններ են ձևավորում, իսկ դրանց հիման վրա հնարավոր է ընդլայնել երխոսությունը, մեծացնել ռեպլիկների քանակը՝ ապահովելով դրանց տրամաբանական կապը, մտքի զարգացումը:

Աշակերտները պետք է կարողանան օգտագործել յուրացված տեսակի հարցերը տվյալ անձի կամ երևույթի մասին անհրաժեշտ ինֆորմացիա ստանալու համար: Ուսուցիչը առաջարկում է աշակերտներին մեկը մյուսից ինֆորմացիա ստանալ իրենց ընտանիքների մասին: Աշակերտները զույգերով զրուցում են միմյանց հետ շշուկով, հետո ներկայացնում դասարանին:

Օր՝ Ann: Is your family large, Aram?

Aram: No, it is not. It is small.

Ann: Where does your family live?

Aram: My family lives in a small house.

Չրուցող զրուցելի փոփոխության հետ նորություն է մտնում զրույցի մեջ, փոխվում է բովանդակությունը, քանի որ յուրաքանչյուր աշակերտ տեղեկություն է տալիս իր ընտանիքի մասին: Նման զրույցների դեպքում յուրաքանչյուր աշակերտ ինքն է որոշում իր արտահայտած ռեպլիկի բովանդակությունը:

Աշակերտներին զրույցի մղելու համար կարելի է տարբեր մտքեր արտահայտել, ինչդիր-ներ տալ, օգտագործել նկարներ, վիդիոներ, դիդակտիկ ֆիլմեր:

Ուսուցիչը կամ մի աշակերտ ուսուցչի օգնությանը, արտահայտում է մի միտք, աշակերտ-ները հարցեր են տալիս:

T: We have a new pupil at our school.

P₁: What is his name?

P₂: How old is he?

P₃: Where does he live?

Կարելի է առաջարկել ,որ աշակերտները զրույցի միջոցով տեղեկություններ ստանան մեկը մյուսի ծննդյան օրվա տոնակատարության, տան/բնակարանի, մայրիկին օգնելու մասին և այլն:

Օրինակ`

T: Aram's family got a new house last month.

P₁: How many rooms does your new house have?

P₂ It has four rooms

P₃: What street is your new house in?

P₂: It is in Aghayan street.

Or

T: Children, it was Ann's birthday yesterday. Speak with her about the day.

P₁: I am sorry, Ann, I didn't know about it. I wish you many happy returns of the day.

Ann: Thank you very much.

P₂: Who was present, Ann?

Ann: My uncle and aunt, my two cousins and some of my friends.

P₃: How did you spend your time?

Ann: My cousin played the piano and we all danced. You know, my aunt sings very well. She sang folk songs.

P3: I am very glad you had a good time.

Հարց-պատասխան, հաղորդում – հարց երկխոսական միասնությունները զրուցելիս օգտագործելու հմտությունները առավել զարգացնելով, արդեն բարձր դասարաններում աշակերտներին պետք է վարժեցնել հաղորդում-հաղորդում և հարց-հարց երկխոսական միասնությունների օգտագործելուն: Վարժությունների հաղորդակցման խնդիրը, արտաբերվող ռեպլիկների արտասանական և ինտոնացիայի ճշտությունը շարունակում է մնալ ուսուցչի ու շահագրգռության կոնտրոլում:

Ուսուցիչը հարցերով դիմում է աշակերտներին և նրանց խնդիրն է ճշգրտում մտցնել: Ուսուցիչը ասում է բառեր, որոնք օգնում են աշակերտներին ճշգրտումներ կատարել:

Օրինակ`

T: Will you open the door? (hot)

P: Is it hot in the room?

T: Will you switch on the light? (dark)

P: Is it light in the room?

Այս տիպի վարժությունները ամրապնդում են այդ միասնությունների օգտագործման կարողությունը և նախապատրաստում երկխոսության մեջ կիրառելու համար:

Հաջորդ աստիճանում ուսուցիչը ստեղծում է իրադրություն, իսկ աշակերտները սկսում են զրուցել այդ իրադրությունից բխող հաղորդակցման խնդրի համաձայն: Օրինակ`

T: You have difficulty in translating the text. Ask Ann to help you.

--Have you any spare time, Ann?

A: What can I do for you?

--Will you help me to translate the text?

A: When do you want me to do it?

--After the classes, if you are free.

A: With pleasure.

__Thank you. Ann

A: Don't mention it.

Մեր կարծիքով երկխոսության ուսուցման մեջ նշված վարժությունների կիրառումը ռացիոնալ ու արդյունավետ է դարձնում ուսուցման պրոցեսը:

Եզրակացություն

Հետազոտողի առաջ չի կարելի հարցերը քննված և վերջնական ձևակերպմամբ դնել, այլ քննարկելիք խնդիրը պետք է վստահել հետազոտողի անձնական աշխատանքին: (Գ. Էդիյան)

Երկխոսության տարրերի օգնությամբ սովորելը, որը ես օգտագործում եմ դասերի ընթացքում, հնարավորություն է տալիս աշակերտներին ընկալել ուսումնասիրվող նյութը և յուրացնել այն ավելի խոր իմաստաբանական մակարդակում: Մեր բոլոր դասերին մենք օգտագործում ենք խմբային աշխատանք և ակտիվ երկխոսություն: Աշակերտների հետ միասին մենք ակտիվորեն մասնակցում ենք քննարկումներին և անհրաժեշտության դեպքում ուղղում և ուղղորդում աշակերտների մտքերը: Միևնույն ժամանակ, մենք ինքներս ենք նշում, թե ինչպիսի օգնության կարիք ունի այս կամ այն խումբը: Այս աշխատանքը, ինչպես նշեցինք, թույլ է տալիս ավելի լավ ճանաչել երեխաներին, հասկանալ, թե ինչպիսի օգնության կարիք ունեն նրանք, սովորեցնում է սովորողների մտքերը ճիշտ ուղղությամբ ուղղորդել: Եվ եկանք այն եզրահանգման, որ դասից դաս երեխաներն ավելի լավ են կարողանում արտահայտել իրենց մտքերը, նրանք աստիճանաբար ավելի տեղեկություն են ձեռք բերում տվյալ թեմայի վերաբերյալ, զարգանում է նրանց բառապաշարը, բանավոր արտահայտվելու հմտությամբները: Դասի ընթացքում հարցերը բարձրացնում են աշակերտների մտավոր գործունեությունը, թույլ են տալիս բոլորին խոսել: Հարցերը նպաստում են երեխայի վերլուծական, քննադատական մտածողությանը զարգացմանը:

Երկխոսության ուսուցումը օգնում է աշակերտներին սովորել լսել միմյանց, լրացնել տեղեկատվությունը և վերլուծել այն: Իտերակտիվ ուսուցման հիմնական արժեքն այն է, որ այն թույլ է տալիս կառավարել սովորողների ճանաչողական գործունեությունը: Երկխոսության ուսուցումը նպաստում է աշակերտների մոտ նոր տիպի մտածողության ձևավորմանը, դաստիարակել ստեղծագործ, ակտիվ, անկախ, ինքնուրույն որոշումներ կայացնելու ընդունակ, համարձակ սերունդ, որը միշտ կձգտի ինքնակրթության: Գործնականում օգտագործելով երկխոսության ուսուցման տեխնոլոգիան՝ համոզվեցինք, որ արդյունավետ մանկավարժական փոխազդեցության հիման վրա կազմակերպված դասը ունի մի շարք առավելություններ: 1. Աշակերտներին պատրաստում է արդյունավետ աշխատանքի, ապահովում է ամբողջ դասարանի զբաղվածությունը: 2. Դասի նյութը յուրացվում են բոլոր աշակերտների կողմից: 3. Դասերին տիրում է համագործակցության և փոխադարձ օգնության մթնոլորտը:

Երկխոսությանը օտար լեզուներ սովորեցնելու և սովորելու անփոխարինելի միջոց է:

Գրականություն

1. Ա. Մ. Քեչիշյան--<<Անգլերեն Բանավոր խոսքի ուսուցումը >>

Լույս հրատարակչություն: Երևան -1981

2. <<Օտար լեզուները Հայաստանում>>Գիտամեթոդական հանդես

3. Անգլերեն հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր—ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի կենտրոն: Երևան 2009

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Արդյունավետ հաղորդակցություն

ԿԱՏԱՐՈՂ` Բուժնագյան Գայանե

ՂԵԿԱՎԱՐ` մ.թ.գ., դոցենտ Աննա Պապոյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1	
Սոցիալ-մշակութային տեսության արդյունավետությունը օտար լեզվի ուսուցման և արդյունավետ հաղորդակցման գործընթացում	4
Գլուխ 2	
Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները և արդյունավետ հաղորդակցությունը	10
Եզրակացություններ	16
Գրականության ցանկ	17

Ներածություն

Կրթության գործընթացի նկատմամբ ավանդական մոտեցումը վերջին տարիների ընթացքում սոցիալ-քաղաքական զարգացումների, տեխնոլոգիական առաջընթացի միտումներով պայմանավորված էական փոփոխությունների է ենթարկվել: Յուրաքանչյուր միջավայր և ժամանակաշրջան ծնում են իրենց յուրահատկությունները և ուսուցման համակարգում պահանջում այլ մոտեցումներ: Որպես համաշխարհային կրթական աշխարհի մաս՝ անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումը ևս պետք է դիտարկել որպես հաղորդակցվելու կարողությունների զարգացմանը միտված կրթական գործընթաց: Իսկ հաղորդակցական հմտությունների և գործառույթի զարգացումը սոցիալ-մշակութային մոտեցման տիրույթում է:

Լեզուն իրացվում է հասարակության լեզվական գործունեությամբ, հաղորդակցման միջոցով, և հենց մարդու հաղորդակցումով օտարվում ու դառնում է օբյեկտիվ ռեալություն: Հաղորդակցման մեջ, խոսելու ընթացքում լեզուն իրացվում է իրական խոսքի միջոցով: Եվ քանի որ խոսքը, իր հերթին, ոչ այլ ինչ է, եթե ոչ անհատի, տվյալ մարդու խոսքային գործունեության արդյունք, ապա սա ինքնին պահանջում է խոսքի ու լեզվի և, դրա հետ միասին ու դրա միջոցով, անհատականի ու հասարակականի փոխհարաբերության լուսաբանություն: Այս հետազոտության շրջանակում քննութիյան կառնենք հաղորդակցումը օտար լեզվի դասավանդման ընթացքում, դրա արդյունավետ կիրառումը և կազմակերպումը, ուստի սահմանենք մեր աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել արդյունավետ հաղորդակցման եղանակները:

Հետազոտության խնդիրներն են՝


1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2. բացահայտել արդյունավետ հաղորդակցմանը նպաստող ուսուցման մեթոդները,
3. անդրադառնալ արդյունավետ հաղորդակցման իրականացմանը անգլերենի դասաժամերին:

Գլուխ 1

Սոցիալ-մշակութային տեսության արդյունավետությունը օտար լեզվի ուսուցման և արդյունավետ հաղորդակցման գործընթացում

Սոցիալ-մշակութային համատեքստի գաղափարը զարգացրել է Լև Վիգոտսկին: Տեսության ուսումնասիրության ամենագլխավոր առանձնահատկությունն ու շրջադարձային բաղադրիչը «Անձի զարգացման մերձակա գոտու» (ԱԶՄԳ) գաղափարն է: Վիգոտսկին բնութագրում է «Անձի զարգացման մերձակա գոտին» (ԱԶՄԳ) որպես «խնդիրներն անկախ լուծելու կարողության իրական մակարդակի և չափահասների առաջնորդությամբ կամ հասակակիցների հետ համագործակցությամբ լուծելու հնարավոր մակարդակի միջակայք»[2; 28]: Վիգոտսկու՝ «ԱԶՄԳ»-ի վերաբերյալ տեսությունը չի բացառում սովորողի միայնակ գործելու կարողությունը, ավելին՝ այն դիտարկվում է որպես խնդիրն անկախ լուծելու իրական մակարդակ: «ԱԶՄԳ»-ն մատնանշում է աջակցության և ինքնակարգավորման հարաբերությունները: «Ինքնակարգավորման» գաղափարն արտահայտում է այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում «ԱԶՄԳ»-ում:

«ԱԶՄԳ» և «Ինքնակարգավորում» փոխհարաբերությունները



Գծ. 1 Սղբյուր՝ [van Lier 1996: 190] [9, 190]

Գծապատկեր 1–ում ներկայացված են «ԱԶՄԳ»–ի և «Ինքնակարգավորման» միջև փոխհարաբերությունները: Երկու շրջանակների միջև եղած տարածությունը ցույց է տալիս մի շարք գիտելիքներ և հմտություններ, որոնք մարդը կարող է ձեռք բերել ուրիշների աջակցությամբ: «ԱԶՄԳ»–ն ընտրված բարդ գիտելիք է, որը դեռ չգիտի, բայց կարող է սովորել ուրիշի օգնությամբ: Օրինակ՝ բարդ գործ կատարելու համար անհրաժեշտ է «սոցիալական աջակցություն» (scaffolding), որի ընթացքում նմանակման (imitation) կամ առաջնորդության (guidance) միջոցով գոյություն ունեցող գիտելիքը միավորվում է փորձին: «ԱԶՄԳ»–ի շրջանակից դուրս նյութերը կամ գիտելիքները մատչելի չեն սովորողի համար: Բայց սովորողի «ինքնակարգավորման գոտին» կարող է ընդլայնվել, եթե նրան տրամադրվեն համապատասխան և հավասարակշռված ռեսուրսներ «ԱԶՄԳ»–ի շրջանակում գիտելիք կերտելու համար: Գծապատկեր 2–ում ներկայացված են այդ ռեսուրսները: «Ինքնակարգավորման գոտին» ընդլայնող ռեսուրսները Սոցիալ–մշակութային տեսությանը առնչվում է scaffolding–ի գաղափարը: Պայմանականորեն այն անվանենք «սոցիալական աջակցության»: Այն առնչվում է Վիգոտսկու սոցիալ–մշակութային տեսությանը երկու կողմով: Նախ՝ այն ճանաչում է սոցիալական փոխհարաբերությունների դերը սովորելու գործընթացում, և երկրորդ՝ ընդունում է այլ մարդկանց ազդեցությունը երեխայի զարգացման վրա: Օտար լեզվի ուսուցման գործընթացում աշակերտի զարգացման մակարդակը որոշելը դժվար է: Դրա համար էլ սոցիալական աջակցության գաղափարը կարևոր է: «Սոցիալական աջակցության» (Scaffolding) գաղափարին են անդրադարձել Բրուները, Լանթոլֆը և Ապելը, Դոնաթոն, Ստորչը, Ֆահիմը և Հագանին, Կառն, Բրուները, Կոդլանը և Դաֆը, Օիթան և այլք: Ըստ Վուդի, Բրուների և Ռոսի՝ որպես սոցիալական համատեքստ սովորաբար ընկալվում է մոդելային օրինակը կամ նմանակումը: Մակայն ուսուցչի միջամտությունը կարող է լինել ավելին, քան այդ երկուսը: «Սոցիալական աջակցությունը» (scaffolding) ուսուցման գործընթացում ստեղծում է սովորողին տրամադրվող աջակցության որակը և քանակը: «Սոցիալական աջակցությունը» բնութագրվում է վեց առանձնահատկություններով՝

- հետաքրքրություն առաջացնել առաջադրանքի նկատմամբ,
- պարզեցնել առաջադրանքը,
- օգնել հասնելու նպատակին,
- նշել կարևոր առանձնահատկությունները, դրա արդյունքում առաջացած տարաձայնություններն ու իդեալական լուծումը,
- վերահսկել առաջադրանքի կատարման ընթացքում ի հայտ եկած հիասթափությունը,
- ցույց տալ կատարված իդեալական տարբերակը²

Օտար լեզվի ուսումնառության գործընթացում, սովորողների դերը սոցիալական փոխգործակցության արդյունքում վերակառուցելով, «սոցիալական աջակցությունը» դրսևորվում է բազմաբնույթ առաջադրանքների մեջ՝ մերժելով միօրինակ թեստերը: Տարեցտարի ավելանում է այն հետազոտությունների թիվը, որոնք քննում են խմբային կամ գույգերով աշխատանքի փոխգործակցության դինամիկան կամ ազդեցությունը (Դոնաթոն (1994), Ուելս (1999), Շիլզ (1993), Օֆթա (1994)): Քննելով օտար լեզվի ուսումնառությունը սոցիալական համատեքստում՝ Դոնաթոն նշում է փոխգործակցությունը սովորողների միջև, ինչպիսիք են դերային խաղերը, թարգմանությունները և հարցազրույց-առաջադրանքները: Դոնաթոնի կարծիքով «կոլեկտիվ» աջակցությունը կարող է հանգեցնել անհատ սովորողի լեզվական կարողությունների զարգացմանը, երբ սովորողները իրենք իրենց դիտարկում են որպես գիտելիքի աղբյուր սոցիալական միջավայրում: Դասակիցների սոցիալական աջակցությունը նա դիտարկում է որպես փոխգործակցության աղբյուր, որը կարող է բարելավել կատարումը:

Բանավեճը Դոնաթոն համարում է սոցիալական աջակցություն՝ գիտակ և սկսնակ հարաբերություններում [4; 33-56], իսկ Լանթոլֆն այն առաջարկում է տեղեկատվություն փոխանակող առաջադրանքների փոխարեն [5; 1-26]: Սվեյնը սոցիալական աջակցության ձև է համարում «համագործակցային երկխոսությունը» օտար լեզվի ուսուցման գործընթացում՝ միաժամանակ այն դիտարկելով «ն՝ ճանաչողական, և՛ սոցիալական գործունեություն» [8; 97-114]: Ըստ Սվեյնի՝ արտաբերված խոսքի երկու կողմերը՝ ճանաչողական գործունեությունը և դրա

արդյունքը, ներկա են համագործակցային երկխոսության և ուսումնական արդյունքի մեջ [8; 97]: Օտար լեզվի ուսումնառության տեսանկյունից փոխգործակցության դերը կարևորվում է որպես ուսումնառության արդյունքի մատակարար... Արդյունք, որ «ասվում է», և արդյունք, որ արդեն «ասված է» [8; 102]:

Թարսը և Գալիմորը կարևորում են զրույցի, հարցման, հետադարձ կապի ու բացատրության առկայությունը առաջադրանքի ամբողջ կատարման ընթացքում՝ հատկապես ուսուցման առաջին փուլում: Նրանք տեքստի շուրջ կատարվող աշխատանքը համարում են Վիգոտսկու «ինքն իր հետ խոսույթի/դիսկուրսի յուրահատուկ սոցիալական փոխգործակցության» օրինակ: «Լավ տեքստը զրույցի ընկեր է: Տեքստերի շուրջ խոսույթը շարունակական զրույց է» [8, 159–160]: Կողլանի կարծիքով լեզվի յուրացումը տեղի է ունենում համագործակցային գործընթացում, երբ լեզվական «առաջադրանքի» էությունն անմիջապես վերափոխվում է սովորողների որոշակի գործունեության [3; 173-193]:

Սավիգնոնը հաղորդակցական գործնական առաջադրանքներում կարևորում է ոչ միայն նպատակային լեզվի օգտագործումը, այլև առաջադրանքների հաղորդակցական և մշակութային բնույթը: Շեշտադրելով տարբեր իրավիճակային միջավայրերի ստեղծման անհրաժեշտությունը դասապրոցեսում՝ նա առաջարկում է նպատակային լեզվով 1–2 բոլոր տևողությամբ հարց ու պատասխան, նկարների օգտագործում, լսարանային գործունեություններ, կարճ գնահատականներ ու կարծիք տարբեր թեմաների շուրջ: Նմանապես այլ վարժություններում (նկարագրական, ընթացիկ գործողություն, տեղեկություն քաղող, հաշվետվություն սվող) նա շեշտադրում է տարբեր իրավիճակային միջավայրերի ստեղծման անհրաժեշտությունը դասապրոցեսում [6; 28-29]:

Սոցիալ-մշակութային գործոններն ու սոցիալ-մշակութային համատեքստը կանխորոշում են օտար լեզվի ուսուցման և ուսումնառության հաղորդակցական բնույթը՝ ուսուցչին վերագրելով բազմաթիվ գործառույթներ (Շիլդ, Ուելս, Սավիգնոն): Ըստ Շիլդի՝ ժամանակի ընթացքում անհրաժեշտ է զարգացնել «հաղորդակցական լսարան»: Այն պահանջում է սոցիալ-հուզական մթնոլորտ, որտեղ սովորողը դառնում է ակտիվ և ներգրավված անհատ: «Հաղորդակցական լսարանը» բնորոշվում է

համագործակցության ոգով, որտեղ սովորելու նպատակային լեզուն սոցիալական համընդհանուր փորձն է [7, 309]: Շիլլը օտար լեզվի ուսուցման գլխավոր թիրախը համարում է ներքոնշյալ կարողունակությունների/կոմպետենցիաների զարգացումը՝ որպես հաղորդակցական հմտությունների անհրաժեշտ նախապայման: Սոցիալ-մշակութային կարողունակությունը լեզվակիր ժողովրդի մշակութային առանձնահատկություններին ծանոթություն է: Սոցիալական կարողունակությունը սովորողի վստահ հաղորդակցությունն է լեզվակիրների հետ և սոցիալական իրավիճակներում հաղորդակցվելու կարողությունը: Լեզվական կարողունակությունը (բավարար բառապաշար և քերականություն) իր հերթին ներառում է այլ ենթակոմպետենցիաներ.

- սոցիալ-լեզվական կարողունակություն (լեզվի կիրառությունը իրադրությանը համապատասխան),
- խոսույթ/դիսկուրս (զրույցին մասնակցելու ունակություն),
- ռազմավարական կարողունակություն (մեկի քերականության և բառապաշարի բացերի մասին խոսելու ունակություն) [7; 1-2]:

Ս. Սավիգնոնը առաջարկում է հաղորդակցական հմտությունները զարգացնել համապատասխան հաղորդակցական միջավայրի ստեղծումով [6; 28-29]:

Ամփոփելով կարելի է նշել, որ օտար լեզու սովորողի սոցիալ-մշակութային իրազեկվածությունը և նրա մշակութային ուղղվածությամբ ուսուցումը կարող է՝

1. օգնել օտար լեզվի գիտելիքի յուրացմանը և լեզվի տիրապետմանը,
2. բարելավել խոսքային գործունեությունը և կատարելագործել օտար լեզու ուսումնառողի լեզվական հմտությունները,
3. զարգացնել լեզու սովորողի հաղորդակցական, սոցիալ-մշակութային և բազմամշակութային, գործնական-կիրառական կոմպետենցիաները,
4. զարգացնել լսողությունը իմաստավորված համատեքստում,
5. պատրաստել սովորողին տարբեր իրավիճակներում սոցիալ-մշակութային համագործակցության և ինքնուրույն գործելակերպի,

6. օգնել գործնական կյանքում ինքնուրույն շփվելուն և հաղորդակցվելուն,

7. օգնել լեզվակիր ժողովրդի ապրելակերպի և մտածելակերպի, ինչպես նաև մշակութային ժառանգության ավելի լայն ու խոր ըմբռնմանը,

8. զարգացնել մշակութային կարողությունները և տարբերությունները ըմբռնելու, ճանաչելու, ընդունելու, գնահատելու և արժևորելու կարողությունները,

9. ձևավորել քաղաքացիական այնպիսի կարողություններ և հմտություններ, ինչպիսիք են համագործակցությունը, ազատ ընտրությունը, ինքնակատարելագործումը, ստեղծագործականությունը և այլն:

Այսպիսով՝ ուսումնասիրելով վերը թվարկած հեղինակների վերլուծությունները՝ փաստում ենք օտար լեզվի ուսուցման գործընթացին սոցիալ-մշակութային ուղղվածություն հաղորդելու արդյունավետությունն ու անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ուսուցիչների ձեռքում է աշխարհի ամենակարևոր ռեսուրսը՝ երեխաները» :

Ռոբերտ Ջոն Միհան

Անառարկելի է, որ դպրոցականների կրթադաստիարակչական գործունեության արդյունավետության բարձրացման հարցում կարևոր դեր ունեն նրանց ուսումնառական դրդապատճառները: Մեր մանկավարժական պրակտիկայում համոզվել ենք, որ դպրոցականների դրդապատճառներն ու նպատակները խիստ տարբերվում են միջին և ավագ դպրոցներում սովորողների դրդապատճառներից: Հանրակրթության նշված օղակների ուսուցիչների և ծնողների շրջանում կատարված մեր դիտարկումների արդյունքում բացահայտել ենք, որ տվյալ դասարաններում սովորողների դրդապատճառներն ավելի հեռահար են. նրանց մեծ մասը սովորում է՝ գիտակցելով, որ ուսումնական ձեռքբերումներն իրենց պետք են ոչ թե գնահատականի, այլ հետագա ողջ կենսագործունեության ընթացքում հաջողություններ գրանցելու համար: Ի հակադրություն սրա՝ տարրական դասարաններում աշակերտների մեծ մասը սովորում է բարձր գնահատականի, դասընկերների շրջանում դրական վարկանիշ ձեռք բերելու և այլ նման նպատակներով: Պատահական չէ, որ դպրոցականի ինքնագնահատականի բարձրացման, մասնավորապես կայուն բարձր մակարդակի հասցնելու գործընթացի արդյունավետությունը մանկավարժները պայմանավորում են գործունեության նրա դրդապատճառներով: Բարձր ինքնագնահատականի ձևավորման գործընթացում մասնավորապես կարևորվում են վեց տարեկանների ուսումնաճանաչողական դրդապատճառները, որոնք ձևավորման փուլում են և նպաստում են նրանց սովորելու ցանկություն բորբոքելուն:

Մանկավարժական գրականության մեջ առանձնացվում են ուսումնական գործունեության նկատմամբ դպրոցականներին հատուկ հետևյալ դրդապատճառները՝

ա) ուսումնական


բ) բարձր վարկանիշային

գ) անհաջողություններից խուսափելու

դ) փոխհատուցող [1; 19] :

Հանրակրթության երեք աստիճաններում կազմակերպվող ուսումնական գործընթացում հաճախակի հանդիպում են մի շարք գործոններ, որոնք նշանակալի ազդեցություն են ունենում ուսումնառության մեջ հաջողություններ գրանցելու գործում. օրինակ՝ ուսուցչի հետաքրքիր և տարբերվող դասեր վարելու կարողությունը: Որքան հետաքրքիր և բազմատեսակ են լինում անցկացվող դասերի մոդելները, դրանց ընթացքում կիրառված մեթոդներն ու հնարները, այնքան մեծանում է սովորողների հետաքրքրվածությունը դրանց նկատմամբ:


Ըստ հանրակրթության երկրորդ աստիճանում սովորող աշակերտների շրջանում անցկացված հարցման արդյունքների՝ սովորողների 36%-ը փաստում է, որ նորարարական մոտեցումներով կառուցված դասը մեծացնում է իրենց ուշադրությունն ու ակտիվությունը ուսումնառության ընթացքում :



Դիագրամա 1

Այս համատեքստում խիստ կարևոր է ուսուցչի կողմից սովորողների տարիքային և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, տվյալ դասարանի

երեխաներին բնորոշ առանձնահատկությունների ուսումնասիրումը և ըստ այդմ՝ ուսուցման գործընթացի կազմակերպումը: Օրինակ՝ շատ հաճախ խնդիրներ են ծագում կրթության առաջին աստիճանն ավարտած և երկրորդ աստիճան տեղափոխված աշակերտների մոտ: Սա պայմանավորված է նրանով, որ հինգերորդ դասարանում դասավանդող ուսուցիչների փոփոխություն է լինում, և երեխաները, չորս տարի սովոր լինելով մեկ ուսուցչի աշխատանքին, հանկարծ բախվում են միանգամից մի քանի ուսուցչի պահանջներին: Որոշ երեխաներ հեշտորեն են հաղթահարում այս փոփոխությունները, իսկ նրանց մի մասին էլ առանձնհատուկ մոտեցում է անհրաժեշտ դրանք հաղթահարելու համար: Ըստ հինգերորդ դասարանցիների շրջանում անցկացված հարցման արդյունքների՝ երեխաների 78%-ը դժվար է հարմարվում նոր իրողությանը:



Դիագրամա 2

Ուսուցիչների փոխարինումը մեկը մյուսով ի՞նչ զգացումներ է առաջացնում քո մեջ:


Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ աշակերտը ուսուցչի «հասկացա՞ք դասը, երեխանե՛ր» հարցին տալիս է դրական պատասխան, թեպետ չի հասկացել: Սա նշանակում է, որ երեխան ունի այնպիսի պատճառներ, որոնք խանգարում են բարձրաձայնել իր ունեցած դժվարությունների մասին: Ուսուցչի խնդիրն է դրանք բացահայտելն ու լուծումներ տալը: Նման դեպքերում դրական ազդեցություն են ունենում անհատական զրույցները, որոնց միջոցով աշակերտը կզգա ուսուցչի

արտացավությունն ու հոգատարությունն իր հանդեպ, սա էլ իր հերթին կնպաստի աշակերտի՝ ուսումնական գործընթացում առավել անկաշկանդ լինելուն: Աշակերտների ուսման նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը կարող է նվազել կամ աճել ուսուցչի կողմից նրանց կատարած աշխատանքի գնահատման արդյունքում: Եթե ուսուցիչը նկատել է, որ աշակերտը սպասվածից ավելի անհաջող է գրավոր աշխատանքը կատարել, ապա անհրաժեշտ է դիտարկումը ձևակերպել այնպես, որ աշակերտը զգա իր ուժերի նկատմամբ ուսուցչի ունեցած հավատը և հասկանա, որ առավել ուշադիր լինելու դեպքում ինքը կարող է շատ լավ արդյունք ունենալ: Օրինակ՝ «քո թույլ տված սխալներն այնպիսին են, որ ավելի ուշադիր աշխատելու դեպքում, ես վստահ եմ, դու դրանք չէիր թույլ տա», կամ՝ «շա՛տ ժամանակ հատկացրու դասերդ պատրաստելուն և կտեսնես, որ ավելի մեծ հաջողություններ կունենաս», «դու լավ ես միտքդ ձևակերպում, անհրաժեշտ է մի քիչ էլ ուղղագրության շուրջ աշխատել», «նախորդ աշխատանքի համեմատ այս աշխատանքն ավելի լավ ես կատարել, շարունակի՛ր նույն կերպ»:

Բացասաբար են ազդում հետևյալ արտահայտությունները. «դու դա լուծել չես կարող, մեկ ուրիշը թող լուծի», «այս աշխատանքը նախատեսված է ինը ստացողների համար», «բացեցի տետրդ և հասկացա, որ այսքան սխալներ միայն դու կարող էիր թույլ տալ», «այս խնդիրը քեզ չեմ բացատրի, միևնույնն է, չես հասկանա»: Ըստ աշակերտների շրջանում անցկացված հարցման արդյունքների՝ աշակերտների 43%-ին ոգևորում են ուսուցչի՝ իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ գովեստի խոսքերը, ինչի արդյունքում մեծանում է ինքնավստահությունը և ավելին անելու ցանկությունը :

Աշակերտների սովորելու ցանկության վրա մեծ ազդեցություն ունեցող հաջորդ գործոնը գնահատումն է: Գնահատել նշանակում է արժևորել, որակել, կարծիք հայտնել, իսկ գնահատականը նիշ է, թիվ, սահման, մակարդակ: Ե. Վ. Բանշիկովնան գրում է «Թվանշանն աշակերտների գիտելիքների մակարդակի չափանիշն է՝ սահմանված պետական ձևաչափերով: Գնահատումը սովորողի ստեղծագործական գործունեության, ներուժի ձգտումների բառացի որակավորումն է: Թվանշանը բխում է գնահատումից, և այդ իսկ պատճառով գնահատումը պետք է ուղղորդի թվանշանին,

այլ ոչ թե հակառակը» [2; 32]: «Գնահատում» բառը կրթական գործընթացում գործածության մեջ է մտել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այն լայն հասկացություն է, որը նկարագրում է սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով տեղի ունեցող ցանկացած գործողություն: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման, վերահսկման և բարելավման մեխանիզմ: Այն նպաստում է սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը [2; 54]: Գնահատման համակարգը ուսուցման խնդիրները ախտորոշելու, ուսուցչի և ծնողի միջև հետադարձ կապ ապահովելու հիմնական գործիքն է: Գոյություն ունեն գնահատման բազմաթիվ ձևեր և մեթոդներ՝ միավորային, բնութագրող, հայտորոշիչ և այլն: 2021 թվականի փետրվարի 4-ին ՀՀ Կառավարությունը հաստատեց Հանրակրթության պետական նոր չափորոշիչը, ըստ որի՝ միավորային գնահատումը կգործի հանրակրթության երկրորդ մակարդակում՝ սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից, իսկ կրտսեր դպրոցում միավորային գնահատումը կփոխարինվի խրախուսական բնութագրումներով [2; 15] : Տարրական դասարաններում սովորող աշակերտների ծնողների շրջանում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ծնողների 34%-ը կարևորում է գնահատանիշի դերը կրթական գործընթացում, 62%-ը ողջունում է տարրական դասարաններում գնահատանիշեր չունենալու որոշումը, իսկ 4%-ի համար միևնույնն է՝ գնահատականներ կլինեն, թե ոչ:



Դիագրամա 3՝ կարևորում էք արդյոք գնահատականի առկայությունը:

Այսպիսով, գնահատման կամ խրախուսման ժամանակ ևս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հաղորդակցման տարբեր միջոցներին և դրանց ճիշտ ընտրությանը, որովհետև ցանկացած վրիպում կարող է հոգեբանական խնդիրներ առաջացնել՝ հանգեցնելով հիասթափության և անտարբերության:

Եզրակացություն

Աշխատանքը կատարելիս եկանք այն եզրակացությանը, որ օտար լեզվի դասավանդման ընթացքում արդյունավետ հաղորդակցում իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ դրույթները.

- Մեր մանկավարժական պրակտիկայում բոլոր վերոհիշյալ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն են տալիս բացահայտել և զարգացնել սովորողների խոսքը, գեղարվեստական ունակությունները, ստեղծագործական բնույթի հանձնարարությունների իրականացման կարողությունները նաև դաստիարակել ցանկացած գործունեությանը ստեղծագործական վերաբերմունքի ցուցաբերման հատկություն:
- Նորարար մանկավարժությունը պահանջում է ամբողջովին վերանայել մանկավարժական՝ ինչպես ուսուցման այնպես էլ դաստիարակչական գործընթացը, դիտարկել սովորողին որպես գործունեության սուբյեկտ:
- Ուսուցչի խոսքը վճռական դեր ունի սովորողների խոսքային հաղորդակցման ձևավորման և արդյունավետ հաղորդակցման իրականացման գործում:
- Արդյունավետ հաղորդակցություն տեղի է ունենում, երբ ճիշտ են ընտրված և գրագետ կիրառված խոսքային մեթոդները :
- Օտար լեզվի դասավանդման և խոսքային հաղորդակցման ընթացքում կարևոր և գլխավոր նպատակը խոսքի զարգացումն է:

Գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» 2018 թ.,
2. Հանրակրթական պետական չափորոշիչ, 2021 թ.:
- Պոլոնսկի Վ. Մ, Դպրոցականների գիտելիքների գնահատումը, Երևան, «Լույս» 1983թ.,
3. Coughlan, P. & Duff, P., Same Task, Different Activities: Analysis of SLA Task from an Activity Theory Perspective, in J.P. Lantolf and G. Appel (eds.), Vygotskian Approaches to Second Language Research. Ablex Publishing Corporation, 1994.
4. Donato, R. Collective scaffolding in second language learning. In: J. P. Lantolf and G. Appel. (eds), Vygotskian approaches to second language research. N. J: Ablex Publishing Corporation, 1994, pp. 33–56.
5. Lantolf J. P., Introducing sociocultural theory in J.P. Lantolf, (ed.), Sociocultural Theory and Second Language Learning, Oxford University Press, 2000, pp. 1–26.
6. Savignon, S. J., Communicative Competence: An Experiment in Foreign–Language Teaching, 1972, pp. 28–29
7. Sheils, J. Communication in the modern language classroom. Council for Cultural Co–operation, Project No. 12, “Learning and teaching modern languages for communication,” Council of Europe Press, 1993, 309 page,
8. Swain, M., The Output Hypothesis and Beyond: Mediating Acquisition Through Collaborative Dialogue. In Lantolf, J. P. (Ed.) Sociocultural Theory and Second Language Learning, United Kingdom: Oxford University Press. 2000. pp. 97–114
9. Vygotsky, L., Mind in Society: The development of Higher,

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ The Role of a Teacher In Modern Education

ԿԱՏԱՐՈՂ՝ Լուսինե Մամյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Գ. Թ., դոցենտ Աննա Պապոյան

Content

INTRODUCRTION	2
CHAPTER 1 Brief Overview of the Role of a Teacher in Educational Process	5
1.1 The historical role of teachers in education	5
1.2 The teacher's role as a facilitater of learning	6
1.3 The impact of the technological advancements and pedagogical skills on the role of the teacher.	8
CHAPTER 2 The Role of a Foreign Language Teacher.	9
2.1 Language teachers role in education.	9
2.2 Nurturing holistic development.	10
2.3 Personalization and differentiation.	10
2.4 Analysis of the teacher's role in designing effective assessments and providing constractive feedback.....	12
2.5 Overcoming challenges	12
CONCLUSION	14
BIBLIOGRAPHY	16

INTRODUCTION

